Բաթումի դաշնագրի հետ կապված խնդիրները կարգադրելու համար Ազգ. Խորհուրդը Ալեքսանդրապոլ ուղարկեց յատուկ պատուիրակութիւն՝ բաղկացած Մ. Մուսինեանից, Թամամշեանից, բժ. Յ. Մելիքեանից, գօր. Տէր-Յակոբեանից, գնդ. Բիշմիշեանից և գնդ. Վեքիլեանից: Պատուիրակութեան յանձնարարուեց բանակցել Թիւրք հրամանատարութեան — Քեազիմ Կարաբէքիրի հետ Բաթումի դաշնագրից բխող հետեւեալ հարցերի մասին. 1) Գաղթականութեան վերադարձը իրենց տեղերը. 2) Գերիների փոխանակումը. 3) Թիւրքական զօրքի Հայաստանից անցնելու պայմանները. 4) Երկաթուղու փոխանցման խնդիրը. 5) Ղարաքիլիսայի պարպումը և յանձնումը հայերին:

Պատուիրակութիւնը Ալեքսանդրապոլում ընդունուեց պատշաճ քաղաքավարութեամբ. սկսուեցին բանակցութիւնները, բայց հայերի դրած հարցերից և ո՛չ մէկը չընդունուեց Թիւրքերի կողմից: Նրանց գրաղեցնողը Հայաստանի վրայով զօրք փոխադրելու իրաւունքն էր և Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղագծի անմիջական փոխանցումը: Եւ ա՛յս պահանջներին էր, որ ամենից աւելի հակառակում էին հայերը:

Տեսնելով հայերի յամառութիւնը, առանց ընդհատելու Ալեքսանդրապոլի բանակցութիւնները, յուլիս 7-ին Թիւրքերն անցան յառաջխաղացման Սարդարապատի ճակատում: Զօր. Սիլիկեանը հրամայեց մեր զօրքերին թողնել երկաթուղին և դիրքեր գրաւել Էջմիածնի շրջանում: Յուլիս 8-ին Թիւրքերը մեծ ուժերով յարձակուեցին Քեորփալու—Զէյվա գծի վրա, բայց յետ շպրտուեցին 5րդ գնդի և կամաւորական խմբերի ուժգին հակահարուածով: Թողնելով այս կէտում պահակ զօրամասեր՝ Թիւրքերը շարժուեցին դէպի արեւելք. յուլ. 8-ին գրաւեցին Խաթունարխ գիւղը Էջմիածնից 10 կիլոմետրի վրա. յուլիս 9-ին մտան Զորանքեարա, Նէջլու, Թազաքենդ և Աղհամզալու գիւղերը: Այսպիսով հաստատուեց Բաթումի դաշնագրի սահմանագիծը:

Թիւրքերը դիրքեր գրաւեցին Երեւանից 7 կիլոմետր հեռու՝ Թնդանօթների բերաններն ուղղելով դէպի Հայաստանի մայրաքաղաքը: